


ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԵԿԵՂԵՅՈՒ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԼՅՈՒԲԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Արցախի Տիգրանակերտը Տիգրան Մեծի անունը կրող այն բնակավայրն է, որի տեղը պարզված է և որն արդեն տասը տարի (2005–2015) ենթարկվում է հնագիտական հետազոտության<sup>1</sup>: Քաղաքը գտնվում է Ասկերանի շրջանում, Խաչենագետի ներքնահովտում՝ գետից հարավ ընկած Վանքասար կոչվող լեռան համեմատաբար ցածր բարձունքներից մեկի վրա և այդ լանջին կից գոգավորությունում՝ Արքայական աղբյուրների (Շահբուլաղ) հարևանությամբ: Տիգրանա-



Նկ.1. Արցախի Տիգրանակերտի գլխավոր հատակագիծը՝  
պեղված ճարտարապետական համալիրների նշումով

ա. ամրացված թաղամասը՝ Միջնաբերդով, բ. Կենտրոնական թաղամասը, գ. ամտիկ թաղամասերը, դ. ամտիկ և վաղբրիստոնեական դամբարանադաշտերը

կերտը զբաղեցնում է շուրջ 70 հա տարածք: Պեղումների արդյունքում ուրվագծվում է քաղաքի հիմնական կառուցվածքը (նկ. 1. ա, բ, գ, դ):


<sup>1</sup> Քաղաքի հետքերը հայտնաբերել և նրա տարածքում հնագիտական պեղումներ է իրականացնում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը՝ պ. գ. դ. Հ. Պետրոսյանի ղեկավարությամբ:

Տիգրանակերտի Կենտրոնական թաղամասի տարածքում է կառուցվել վաղքրիստոնեական եկեղեցին: Մինչև պեղումները այս՝ արդեն բացված վեհաշուք տաճարի տեղում երևում էին միայն կառույցին պատկանող կրաշաղախի մի քանի խոշոր զանգվածներ և արևելք-արևմուտք առանցքով ձգված փոստրակը: Պեղումների շնորհիվ՝ մոտ 4 մ խորության մեջ բացվել են եկեղեցու ճարտարապետական մնացորդները (նկ. 2):



Նկ. 2. Եկեղեցու տեսքը. 1. պեղումներից առաջ, 2. պեղումներից հետո, լուսանկարը՝ Զ. Պետրոսյանի

Եկեղեցու հատակագծային և ծավալատարածական հորինվածքը: Պահպանված ավերակները հնարավորություն են տալիս վերականգնել եկեղեցու հատակագիծը: Այն արտաքուստ շեշտված արսիդով միանավ սրահ է (նկ. 3):



Նկ. 3. Տիգրանակերտի բազիլիկ եկեղեցու հատակագիծը

Արևելքից արևմուտք ձգվող ուղղանկյուն աղոթասրահը (21,4 x 6,8 մ) արևելքում ավարտվում է ներսից կիսաշրջանաձև՝ ոչ խորադիր (3,4 մ), դրսից հնգանիստ ար-

<sup>2</sup> Պեղումներն իրականացրել են հնագետներ՝ պ. գ. թ. Աղավնի Ժամկոչյանը, պ. գ. թ. Տատյանա Վարդանեսովան և պ. գ. թ. Վարդգես Մաֆարյանը՝ Հ. Պետրոսյանի ղեկավարությամբ:

սիդով: Պահպանված են եկեղեցու արևելյան ճակատի արսիդի հարավային կողմի երկու նիստերը միայն (մեկ շարք բարձրությամբ՝ 0,68 մ), որոնք հնարավորություն են տալիս պարզելու նիստերի քանակը:

Դրսից հնգանիստ արսիդով ներսից թե՛ կիսաշրջանաձև (Բայբուրդ, Ջրվեժ, Շոդագավանք, Վանաստան) և թե՛ պայտաձև (Ոսկեվազ, Ջարջառիս, Էջմիածին, Պեմզաշեն) միանավ եկեղեցիներ՝ հատակագծային տարբեր համաչափություններով հայտնի են նաև այլ տեղերում<sup>3</sup>:

Տիգրանակերտի եկեղեցին բարձրանում է 28,85 x 11,25 մ չափերի ուղղանկյուն՝ եռաստիճան (1,2 մ բարձրությամբ) որմնախարսիսի վրա, որը հիմնականում (բացառությամբ արևելյան, մասամբ նաև հարավային կողմի) պահպանված է և շենքի պարագծային պատերի արտաքին մակերևույթից դուրս է գալիս 1 մ չափով: Աստիճանների բարձրությունը մի փոքր գերազանցում է դրանց լայնությունը (բարձրությունը հիմնականում 0,41 սմ, լայնությունը՝ 0,33 սմ): Եռաստիճան բարձր որմնախարսիսի եկեղեցու պատի արտաքին մակերևույթի մի մասն է և հատակից բարձր է: Հիմնախարսիսիների այսպիսի կառուցվածքը թելադրված է երկրաշարժային ազդեցությունների նկատմամբ շենքի դիմացկունության ուժեղացման անհրաժեշտությունից: Դրանց միջոցով փոքրացվում էր պատերի



1



2

Նկ. 4. Եկեղեցու արսիդը. 1. արտաքին կողմից, 2. աղոթասրահը, լուսանկարը՝ Դ. Պետրոսյանի

ստորին մասերի վրա ընկնող բեռնվածությունը: Այսպիսի լուծումը նպաստում էր նաև շենքի գեղագիտական ընկալմանը՝ ուժեղացվում էր շենքի մոնումենտալության սուպավորությունը: Արտաքուստ շեշտված արսիդով միանավ եկեղեցին այսօր տեղադրված է ուղղանկյուն հարթակի վրա, որտեղ որմնախարսիսիսը չի

<sup>3</sup> Հայկական ճարտարապետության պատմություն (այսուհետև՝ Հ&Պ), հ. 2, Երևան, 2002, էջ 106:

կրկնում հնգանիստ արսիդի ուրվագիծը: Բացի այդ, խորանի արտաքին նիստերը ծածկված էին կրաշաղախի շերտով: Եկեղեցու արևելյան կողմում վավերացված այսպիսի իրավիճակը խոսում է շինարարական երկու շրջանի և վերակառուցման մասին: Հավանաբար, արտաքուստ շեշտված արսիդը հետագայում ներառվել է ուղղանկյուն պարագծի մեջ (նկ. 4-1):

Եկեղեցուն հարավարևելքից կցված է 4,9 x 3,45 մ ներքին չափերով մի սենյակ: Այս կառույցի հարավային (որը եկեղեցու հետ ընդհանուր է), արևելյան և արևմտյան պատերի առաջին շարքի անկյունաքարերը համաժամանակյա են եկեղեցուն, որովհետև կոնստրուկտիվորեն կապված են բազիլիկայի որմի հետ: Նույնը չի կարելի ասել սենյակի հարավային ու արևելյան պատերի մասին (սրանք ամբողջությամբ վերակառուցված են): Այս կցակառույցի գործառույթի և ծավալի մասին դժվար է խոսել, քանի որ այն բավական շատ է վերակառուցված և վերաօգտագործված: Նախնական կառույցից պահպանվել են միայն վերևում նշված՝ եկեղեցու հետ ընդհանուր որմին պատկանող մի քանի քարեր միայն: Հնարավոր կարելի է համարել, որ այս սենյակը կառուցվել է եկեղեցու վերակառուցման ժամանակ, որովհետև արտաքինից շեշտված արսիդով եկեղեցիները (Ջրվեժ, Ոսկեվազ, Ջարջառիս, Պենգաշեն և այլն)<sup>4</sup> սովորաբար կից կառույցներ չունեն ու արտաքին սրահ կամ որևէ կառույց ունեցող բոլոր միանավ եկեղեցիներում արսիդը առնված է պատերի ուղղանկյուն պարագծի մեջ<sup>5</sup>: Տվյալ դեպքում գործ ունենք արտաքինից շեշտված արսիդի հետ (նկ. 4-1):

Եկեղեցու հարավարևելյան մուտքի դիմաց՝ արտաքին կողմից (ներկայումս 2,7 x 2, 5 մ չափերով) սալահատակ է բացվել, որը դեպի հարավ շարունակվում է: Այս սալերն ավելի փոքր են, քան բազիլիկայի աղոթասրահի հատակասալերը: Եկեղեցու հարավակողմում բացված այս հատվածները թույլ են տալիս խոսել այն մասին, որ այստեղ ապագայում ևս նոր շինություններ են հայտնաբերվելու: Տիգրանակերտի միանավ սրահը կառուցվել է կրաքարի կոպիտ կտորտանքներով և կրաշաղախով կապակցված հիմքի վրա: Այսօր արդեն հստակեցված են եկեղեցու արտաքին չափերը. 27,3 մ երկարություն և 9,3 մ լայնություն, զբաղեցրած տարածքը՝ 253,89 քառ. մ: Արցախի Տիգրանակերտի կենտրոնական թաղամասում պեղված այս միանավ սրահը Անդրկովկասի համանման ամենախոշոր կառույցներից մեկն է: Նրա այդ ազդեցիկ չափերով ու շուրջը բացված կառուցապատմամբ է պայմանավորված նաև հինգ մուտքի առկայությունը: Դրանցից չորսը հյուսիսային և հարավային պատերում են բացվել. ամեն կողմում մեկ զույգ (հարավային կողմում 1,15 մ և 1,6 մ լայնություններով, հյուսիսայինում՝ 1,2 մ և 1,4 մ): Արևմտյան մուտքն

<sup>4</sup> M. Hasratian. Les églises à nef unique avec abside saillante dans L'Arménie paléochrétienne. Armenian studies. Etudes Arméniennes. In memoriam Haig Berbérian. Lisboa, 1986, p. 308–309.

<sup>5</sup> ՀՃՊ, հ. 2, էջ 115:

ունի 1,5 մ լայնություն: Եկեղեցու հարավարևելյան մուտքն արտաքին կողմից վերակառուցումների է ենթարկված, որի արդյունքում որմնախարսխի երրորդ աստիճանի օգտագործման հաշվին պատը լայնացել է՝ հասնելով 1,6 մ-ի:

Մուտքերի այսպիսի «առատություն» վաղքրիստոնեական միանավ սրահներում չի վավերացվել: Արտաքուստ շեշտված աբսիդով եկեղեցիներում առավելագույնը երկու մուտքեր են հանդիպում (Բայբուրդ, Պեմզաշեն): Ընդհանրապես վաղմիջնադարյան միանավ սրահների մուտքերը մեծ մասամբ արևմտյան կողմում են, երբեմն հարավային և արևմտյան (Կառնուտ, Գառնի, Էջմիածին, Լեռնակերտ և այլն)<sup>6</sup>, քիչ հանդիպող՝ հյուսիսային և արևմտյան (Դվին, Փաշվաք)<sup>7</sup> կամ միայն հարավային (Ավան, Ագարակ)<sup>8</sup>:

Դռների բացվածքների ստորին նշագծումները (բացառությամբ հարավարևելյան մուտքի) նույնպես չեն համապատասխանում հատակի մակարդակին՝ դրանից բարձր են: Հյուսիսային պատի մեջ բացված մուտքերի դիմաց՝ հիմնախարսխի ստորին աստիճանի մակարդակում, դրված են 0,5 x 0,6 մ չափերի մեկական քարեր: Աղոթասրահի հատակը սալապատ է, որը նույնպես հիմնականում պահպանվել է: Բացակայում են արևմտյան կողմի հատակի սալերը: Սալահատակն այս հատվածում ավելի քայքայված է, որովհետև հատակն այստեղ նստվածք է տվել, որն էլ պատճառ է դարձել սալերում ճաքերի առաջացման և, ի վերջո, դրանց փշրման ու քայքայման: Սալահատակին զգալի վնաս է հասցրել նաև եկեղեցու ավերումից հետո՝ նրա ներսը բնակելի և տնտեսական նպատակներով օգտագործելու հանգամանքը: Հատակի սալերը ուղղանկյունաձև են և ունեն տարբեր չափեր (0,4 x 0,45 – 0,76 x 1,50 մ): Սալաքարերը, անընդհատ ոտքի տակ լինելով, բավական ողորկ են դարձել. որոշ սալերում առկա են նաև փոսիկներ (նկ. 4-2): Հատակի երկու սալաքարերի վրա փորագրված են երկրաչափական պատկերների պարզունակ համադրություններ (եռանկյունիներ, քառակուսիներ, շեղանկյուններ): Մուտքերն (բացառությամբ հարավարևմտյանի, որն ունի աղոթասրահի հատակի մակարդակը) աղոթասրահի հատակից 10 սմ բարձրացված են:

Հետաքրքիր լուծում ունի եկեղեցու ներքնատեսքը: Բեմը 2,5 մ դեպի արևմուտք երկարեցված է ու աղոթասրահի մակարդակից բարձրացված 0,5 մ: Այս հատվածն ամբողջությամբ սալապատված է, որից դեպի աղոթասրահ իջնում են երկու աս-

<sup>6</sup> ՀՃՊ, հ. 2, էջ 94, 117, 118:

<sup>7</sup> Վ. Մ. Հ ա ր և յ ո յ ն յ ա ն. Դվինի V–VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950 էջ 81–82, P a o l o C u n e o. Le basiliche paleocristiane Armenie.– “Corsi di cultura sull arte Ravennatina e Bizantina”, Ravenna, 1973, p. 90, 93.

<sup>8</sup> М. А с р а т я н. Армянская архитектура раннего христианства. Ереван, 2000, с. 11, 183, Ս. Տ ե ր - Ս ի ն ա ս յ ա ն. Ագարակի միանավ բազիլիկան.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 1979, - 7, էջ 67–75:


տիճաններ (նկ. 5-1): Առաջադիր այս հարթակը, ըստ երևույթին, ժամանակին երեք կողմերում (բացառությամբ արևելակողմի, որտեղ բեմի շարունակությունն է կազմում, և դեպի աղոթասրահ իջեցնող մուտքի) ցանկապատված է եղել, որի մասին վկայում են պեղումներից հայտնաբերված բազրիքի սյունիկների ճարտարապետական մանրամասներ (նկ. 5-2):



Նկ. 5. 1. Եկեղեցու բեմի հատվածը, 2. բազրիքի բեկորներ

Ներքին տարածության այսպիսի տրոհում է ենթադրվում նաև Զվարթնոցի տաճարում, որտեղ նույնպես գտնվել են սյունիկ-բազրիքներ<sup>9</sup>:

Տիգրանակերտի եկեղեցու ամենանշանակալից գտածոներից մեկն էլ կավե (8 սմ տրամագծով) փոքրիկ սկավառակն է: Մրա մեկ երեսին փորագրված է շրջանին ներգծված հավասարաթև խաչ, իսկ մյուսին՝ մորթե գլխարկ կրող, բեղ-մորուքով տղամարդու դիմապատկեր: Սկավառակն ունեցել է միջանցիկ երկու անցք, որոնց օգնությամբ կապվել է ինչ-որ փաթույթի կամ տուփի և յուրօրինակ «դրոշմակնիքի»



Նկ. 6. Կավե սկավառակ

<sup>9</sup> А. Ю. Казарян. Алтарная преграда и литургическое пространство храма Звартноц.— В сб.: Иконостас. Происхождение, развитие, символика. М., 2000, с. 83.

դեր կատարել: Սկավառակի վրա կա հայերեն արձանագրություն. «ԵՍ/ ՎԱԶ [Է] (կամ ՎԱԶ[ԱԳԱՆ]) ԾԱՌԱՅ Տ [ԵԱՌՆ]» (նկ. 6):

Սկավառակը գտնելու հանգամանքների, պատկերագրության և հայերեն տառատեսակների քննությունը թույլ է տալիս այն վերագրել V–VII դարերին<sup>10</sup>: Տիգրանակերտի եկեղեցուց գտնված այս սկավառակը, փաստորեն, Արցախի տարածքում հայտնաբերված ամենահին հայերեն արձանագրություններից մեկն է և Խաչենագետի ներքնահովտի վաղբրիստոնեական-հայկական դիմագծի լավագույն փաստարկը:

Շինարարական տեխնիկան և շինարվեստը: Տիգրանակերտի եկեղեցին կառուցված է Վանքասարի հանքի կրաքարով: Պատերն ամրացված են այդ նույն կրաքարից ստացված կրաշաղախով:


Եկեղեցու արևելյան մուտքի տակ խորացումը հնարավոր է դարձրել պարզել կառույցի հիմքի և հիմնատակի կառուցման կերպը: Քանի որ եկեղեցին բնական ամուր հիմնատակ չունի, ինչպես Տիգրանակերտի ամրացված հատվածները, նրա համար արհեստական հիմնատակ են պատրաստել: Բազիլիկայի հիմքը կրաշաղախով ամրացված միջին և մանր անկանոն քարերով իրականացված 0,6 մ բարձրությամբ հարթակն է, որից անցումը դեպի պատը իրականացվել է որմնախարսի միջոցով: Մեծ մասամբ վաղմիջնադարյան բազիլիկաներում հիմքը այսպիսի եղանակով էր իրականացվում: Որոշ դեպքերում (Քասաղի բազիլիկայում և Էջմիածնի Մայր տաճարի հնագույն շենքում) հիմքերը սրբատաշ քարերից են<sup>11</sup>: Հիմքերը, իրենց վրա կրելով կառույցի որմնախարսիսն ու պատերը, կրկնում են դրանց պարագիծը ու հատակագծում հավասարվում որմնախարսի երրորդ աստիճանի լայնությանը: Ընդհանրապես միջնադարյան կառույցների որմնախարսիսներն ու պատերը հատակագծում կամ հավասար են վերջիններիս լայնությանը, կամ քիչ ավելի լայն են: Տիգրանակերտի բազիլիկայում որմնախարսիսները հավասար են հիմքերի լայնությանը և եռաստիճան են: Տեղանքի թեքությունից ու շենքի նշանակությունից կախված՝ որմնախարսիսները վաղմիջնադարյան բազիլիկաներում ունեցել են մեկ (Քասաղի միանավ եկեղեցի), երկու (Լեռնակերտ, Ջարջառիս) և երեք աստիճաններ (Ջրվեժ, Պենգաշենի միանավ եկեղեցի): Տիգրանակերտի եկեղեցու որմնախարսիսը, պարուրելով կառույցը բոլոր կողմերից և կոնստրուկտիվ նշանակություն ունենալուց զատ, հորինվածքին հաղորդում է նաև վեհություն և հաստատականություն: Դռների խոռոչները մինչև 10–15 սմ բարձ-

<sup>10</sup> Հ. Պետրոսյան, Ա. Մամկոչյան. Հայերեն արձանագրությամբ սկավառակ Արցախի Տիգրանակերտից. – ՊԲՀ, 2009, - 1, էջ 170, Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան. Մշակութային հետազոտություններն Արցախում. Շուշի, Հանդարերդի վանք, Տիգրանակերտ, Երևան, 2009, էջ 40:

<sup>11</sup> Ա. Մահիսյան. Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 71:

բացված են աղոթասրահի մակարդակից ու մեկաստիճան շեմեր են կազմում: Այսպիսի լուծումը նպաստել է դռների խոռոչներում պատերի ու հիմքերի ամրապնդմանը և կանխել շենքի ներս մթնոլորտային տեղումների ներթափանցումը:

Եկեղեցու պատերը կառուցված են ավանդական եղանակով՝ «միդիս» եռաշերտ երկճակատանի սկզբունքով: Որմածքում օգտագործված քարերը երեսի կողմից մշակված և պարագծով շրջատաշված են ու տեղադրված պատի երկու կողմերում: Արանքը լցված է տարբեր մեծության քարի կտորտանքներով համալրված հեղուկ կրաշաղախը, որը, ներթափանցելով բոլոր կարերի և անցքերի մեջ, բացառել է քարաբետոնում դատարկությունների գոյացումը և ապահովել համաձույլ կառուցվածք: Քարերն այստեղ ունեն պատի երեսապատման, ներպատային քարալիցքի կաղապարի, մասամբ նաև պատի վրա ընկնող բեռնվածությունն ընդունող կոնստրուկցիայի գործառույթներ: Պատերից պահպանվել է հիմնականում կրաշաղախի լիցքը (մոտ 3 մ բարձրությամբ), որի մեջ դրոշմված երևում են պատի շարքերի սրբատաշ քարերի բները, իսկ քարերը պոկված են (նկ. 7):



Նկ. 7. Եկեղեցու ճակատները. 1. արևմտյան, 2. հարավային

Սրբատաշ մի քանի քարեր են պահպանվել միայն աղոթասրահի հարավային պատի ներքին երեսի արևելյան և արևմտյան հատվածներում: Պատերի հաստությունը 1,20–1,25 մ է: Որմի ստորին շարքերը շարված են ավելի մեծ քարերից (1,90 x 0,98 մ), քան վերինները: Այսպիսով հեշտանում էր պատի կառուցումը, ապահովվում էր պատի պաշտպանվածությունը վնասվածքներից և բարձրանում սեյսմակայունությունը: Որմածքի հորիզոնական կարանները մշակված են 0,5–1,0 սմ լայնություն ունեցող, 45 աստիճանի թեքությամբ տաշված եզրակոսներով, որը



կոնստրուկտիվ լինելուց զատ, պատի հարթությանը հաղորդել է արտահայտչականություն՝ ստեղծելով որոշակի ռիթմ և մասշտաբ: Քարերն ունեն հատած բուրգի ձև՝ սրբատաշ հիմքով, որոնք զագաթամասով ազուցված են (0,3–0,6 սմ խորությամբ) կրաշաղախի մեջ: Կարանները, որոնք առաջացել են քարերի միացման տեղերում՝ սեպաձև են, որոնք նպաստել են կրաբետոնե միջուկի հետ այդ քարերի լավ կապակցմանը: Միջնադարյան կառույցներում ընդհանրապես, Տիգրանակերտի եկեղեցում նույնպես կրաշաղախը շատ ամուր է (հաստատվում է ճաքերի բացակայությամբ, որոնք հատուկ են ցածրորակ շաղախներին), ինչը պայմանավորված է կրի բարձր ցուցանիշներով: Կրաշաղախի բաղադրության հետազոտման նպատակով եկեղեցու տարբեր հատվածների շաղախներից վերցվել են նմուշներ<sup>12</sup>: Ուսումնասիրությունները կատարվել են ֆիզիկոքիմիական եղանակներով: Նմուշներում որոշվել են խոշոր լցիչի (ավազի) տարբեր ֆրակցիաների տոկոսային քանակությունները, ջրակլանման գործակիցները, ծավալային զանգվածները, կիր-ավազ հարաբերակցությունը: Մանրադիտակային հետազոտության արդյունքում երևում են, որ նմուշները տարբերվում են իրենց բաղադրությամբ և ինչ-որ չափով կարբոնատացման աստիճաններով: Հետազոտության տվյալները ներկայացված են աղյուսակի ձևով.

Նմուշներ	Ֆրակցիայի կազմը %			Բաղադրիչների քանգվածը՝ գրամներով			Մեկվորման գործակից	Ծավալային զանգված՝ գ/սմ <sup>3</sup>	Կիր-ավազ հարաբերությունը	Լցիչ
	< 0.5	0.5-1	> 1	խ. սկզբն.	ավազ	կիր				
1	40.9	12.4	46.2	9.0	5.48	3.52	86.6	1.6	1:1.5	կրաքար, խճավազ
2	49.5	10.7	39.0	8.84	4.6	4.24	11.4	1.3	1:1	
3	43.2	14.6	41.8	10.73	6.8	3.93	20.7	1.6	1:2	
4	54.5	9.9	35.3	8.27	5.94	2.33	15.8	1.7	1:2.5	
11	50.6	14.6	34.3	13.64	9.01	4.63	18.4	1.8	1:2	
12	43.4	10.7	45.2	12.63	8.45	4.18	17.9	1.8	1:2	

<sup>12</sup> Հետազոտությունը կատարել է պ. գ. թ. Ք. Նավասարդյանը:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, հետազոտված նմուշներն իրարից տարբերվում են ջրակլանման գործակցով, ծավալային զանգվածով և կիր-ավազ հարաբերակցությամբ: Ավազային լցիչը բոլոր նմուշներում ներկայացված է կրաքարով և խճավազով: Միջնադարում շինարարության մեջ օգտագործվել է ինչպես հանգած, այնպես էլ չհանգած կիր: Հետազոտությունները պարզել են, որ այստեղ օգտագործված է հանգած կիր, քանի որ տեղական կրաքարի ջերմային մշակումից ստացված կիրը իրենից ներկայացնում էր արագ հանգչող կիր՝ հանգեցման արագությունը տվյալ դեպքում տատանվում էր՝ 5–6 սահմաններում (նկատի է առնված ջրի մեջ խառնելու պահից մինչև առավելագույն ջերմաստիճանին հասնելու տևողությունը): Այսպիսով, ելնելով ստացված կրի հատկությունից, պետք է ենթադրել, որ հարմար չէր օգտագործել չհանգած կիրը՝ հաշվի առնելով տեղանքի կլիմայական պայմանները՝ բարձր խոնավությունը:

Աղյուսակից երևում է նաև, որ 11 և 12 նմուշների բոլոր ցուցանիշներն իրար շատ մոտ են և որոշ չափով տարբերվում են եկեղեցու մյուս հատվածներից վերցված նմուշներից, որը թույլ է տալիս ենթադրել, որ կոնկրետ այդ հատվածի կրաշաղախը պետք է ապահովեր ավելի մեծ կրողունակություն: Դա այդպես է, քանզի փորձանմուշը վերցված է աբսիդի արտաքին նիստերի վրա լցված շաղախից: Այստեղ գործ ունենք հետագա վերակառուցումների հետ, քանի որ անտրամաբանական կլիներ ծածկել պատի սրբատաշ ճակատը:



1



2

Նկ. 8. Կղմինդրների բեկորներ. 1. Տիգրանակերտի եկեղեցուց, 2. Գյավուր կալայի եկեղեցուց

Լաբորատոր քննությունը պարզել է, որ ավազային լցիչը բոլոր նմուշներում ներկայացված է կրաքարով և խճավազով: Դասական շաղախներում գերազանց ամրություն ապահովելու համար պահանջվում էր առնվազն ավազի և կրի երկուսը մեկին հարաբերակցություն: Բավարար էր համարվում (նայած թե կոնստրուկտիվ ինչ հանգույցներում և ինչ կառույցներում էր օգտագործվելու շաղախը) նաև գոնե մեկը մեկին հարաբերակցությունը: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, եկեղեցում օգտագործված շաղախներում այդ հարաբերակցությունը պահպանված է:

Տիգրանակերտի բազիլիկ եկեղեցին կղմինդրապատ ծածկ է ունեցել: Կղմինդրները հիմնականում բեկորային են, որի պատճառով դրանց լայնության և երկարության մասին խոսել հնարավոր չէ: Պատրաստված են ոչ որակյալ, խոշորահատիկ կավից: Մշակումը կոպիտ է, կողերը հաստ (1,8–3,0 սմ) ու ցածր (մինչև 5,0 սմ) և պատրաստված կաղապարներում: Գտնվել են ստորին շարքի կավե կղմինդրի տափակ ու դրանց հպման տեղերը ծածկելու համար փորակավոր մասերը (նկ. 8):

Այս կղմինդրները բնորոշ են V–VI դարերին: Չնայած որ ամբողջական օրինակներ չեն գտնվել, բայց վաղմիջնադարյան այլ հուշարձաններից հայտնաբերված կղմինդրները<sup>13</sup> թույլ են տալիս կատարել որոշ վերականգնումներ: Տափակ կղմինդրները պատրաստվել են ուղղանկյունաձև՝ դեպի ներքև նեղացող հատվածով: Բեկորային նյութի մեջ առկա են փորակավոր կղմինդրի ինչպես կիսաշրջանաձև, այնպես էլ երկթեք տարբերակները: Այսպիսի կղմինդրներ հայտնի են նաև ԼՂՀ Նոր Հայկաջուր գյուղից արևելք գտնվող Գյավուր կալա հնավայրի եկեղեցում (նկ. 9): Վաղմիջնադարում կղմինդրների այս տիպերը տարածված են եղել ոչ միայն Հայաստանում, այլև Անդրկովկասում: Այս մասին են խոսում արևելյան մերձսևծովյան տարածքում՝ Պիթիուլթում պեղված VI դարի բազիլիկայից հայտնաբերված կղմինդրները<sup>14</sup>: Ուսումնասիրողներից ոմանք կարծում են, որ վաղմիջնադարյան կղմինդրների այս ձևն անտիկ ծագում ունի<sup>15</sup>, որի մասին վկայում են մ. թ. ա. II–I դդ. Արտաշատում<sup>16</sup>, Դվինում<sup>17</sup> և հարևան Աղվանքի մայրաքաղաք Կապադակում<sup>18</sup> գտնված կղմինդրները, որոնք, սակայն, վաղմիջնադարյան օրինակներից իրենց չափերով մեծ են: Տիգրանակերտից հայտնաբերված կղմինդրների մեջ չկան VII դարին բնորոշ ավելի նուրբ և մանրահատիկ կավով պատրաստված ու լավ թրծված կղմինդրներ: Այս հանգամանքը նույնպես վկայում է եկեղեցու՝ վերևում արդեն նշված, ավելի վաղ թվագրության մասին: Հայտնաբերվել են նաև քիչ քանակությամբ աղյուսներ՝ պատրաստված ոչ բարձրորակ կարմիր կավից:

<sup>13</sup> Կ. Ղ ա Ֆ ա դ ա ղ յ ա ն, Ա. Ք ա լ ա ն թ ա ղ յ ա ն. Դվին քաղաքը և նրա պեղումները 1973–1980 թթ., Դվին II, Երևան, 2002, էջ 79, Н. М. Токарска и й. Архитектура древней Армении. Ереван, 1946, с. 338–339.

<sup>14</sup> А. М. А п а к и д з е. Великий Питиунт. Тбилиси, 1975, с. 86, рис. 12.1, табл. 7.

<sup>15</sup> А. Л. Я к о б с о н. К изучению раннесредневековой строительной керамики Армении.– ИФЖ, 1979, № 1, с. 220.

<sup>16</sup> А. Г. К а н е ц я н. Античные черепицы из раскопок Арташата.– «Советская археология» (այսուհետև – СА), № 1. М., 1984, с. 184.

<sup>17</sup> Գ. Գ. Ք ո չ ա ղ յ ա ն. Ծածկի քարե սալ Դվինից.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 11, էջ 102:

<sup>18</sup> И. А. Б а д а е в. Античная черепица Кавказской Албании.– СА, 1974 № 2, с. 54.

Ճարտարապետական փոքր ձևերը և դեկորատիվ հարդարանքը: *Կառույցի ճակատների ձևավորման հարցում առանձնապես կարևոր են շքամուտքերը, որոնք գտնվում են եկեղեցու հյուսիսային, հարավային և արևմտյան ճակատներում: Այս մուտքերը, հավանաբար, ունեցել են նաև շքականարներ: Այդ են վկայում հյուսիսային ճակատի արևմտակողմի մուտքի երկու կողմերում՝ հիմնախարսխի երկրորդ աստիճանի վրա դրված քարերը և երրորդ աստիճանի վրա քարերի դրոշմված հետքերը: Հյուսիսային պատի մուտքի երկու կողմերում որմնախարսխի վրա դրոշմված հետքերն էլ խոսում են այն մասին, որ ժամանակին այստեղ «հանգչել են» կամարներ: Շքականար է ունեցել նաև արևմտյան մուտքը, քանզի կամարակիր որմնասյուների խարսխ-քարերը պահպանվել են մուտքի երկու կողմերում՝ որմնախարսխի աստիճանների վրա (նկ. 7, նկ. 9):*




Նկ. 9. Եկեղեցու արևելյան մուտքը

*Այս շքամուտքերը հայված են եղել բազիլիկայի պատերին և կոնստրուկտիվորեն կապված չեն որմի հետ: Հարավային շքամուտքին պատկանող որմնասյան բեկորներ ու խոյակ են հայտնաբերվել պեղումների ընթացքում, որոնք այդ հանգույցը վերականգնելու հնարավորություն են ստեղծում: Դրանց հիմքի չափերը ճշգրտորեն համապատասխանում են որմնախարսխի վրա դրոշմված հետքերի չափերին:*

*Բազիլիկայի պեղումների ընթացքում բացվել են նաև ճարտարապետական բազմաթիվ մանրամասների բեկորներ. համարյա ամբողջական երկու որմնախոյակներ, երեք քառորդ շրջանաձև հատույթով կրկնակի սյունիկների մինչև 1 մ - բարձրությամբ պահպանված որմնասյուների, քիվերի դրվագներ, մեկ խարսխ:*

*Խոյակները (երկարությունը՝ 0,82 մ, լայնությունը՝ 0,5 մ, բարձրությունը՝ 0,4 մ) բնորոշ են վաղ միջնադարին և ունեն գուսպ հարդարանք: Դրանք սեղանաձև են,*

վերևում ունեն թակադակ (0,1 մ), որոնց վրա, հավանաբար, հենվել են շքամուտքը պարփակող կամարները: Խաչային ու այգային հորինվածքներ պատկերող զարդաքանդակներով պատված խոյակները նույնպես տիպական են վաղ միջնադարին: Հորինվածքի դոմինանտը երկու խոյակներում էլ կետագարդ շրջանագծի մեջ վերցված հավասարաթև խաչն է: Խոյակներից մեկում՝ դիմային ճակատում խաչը պարուրված է խաղողի ողկույզով ու տերևով զարդարված որթագալարով, որն անընդմեջ շարունակվում է նաև խոյակի մյուս՝ երկու նիստերում: Ի հավելումն այս թեմայի, կողային ճակատներից մեկում նորից պատկերված է կետագարդ շրջանագծին (ավելի փոքր չափերի) ներգծված հավասարաթև խաչ և վեցթերթյա վարդյակ, իսկ մյուս ճակատում՝ միայն այդպիսի մի վարդյակ (նկ. 10-1):




Նկ. 10. Շքամուտքի խոյակներ

Երկրորդ խոյակի հորինվածքի գլխավոր թեման նույնպես կետագարդ շրջանագծի մեջ վերցված հավասարաթև խաչն է, որի երկու կողմերում փորագրված են քառակուսուն ներգծված քառաթերթ շուշաններ: Խոյակի մյուս երկու նիստերից մեկը զարդանախշեր չունի, որին հանդիպակաց նիստի վրա փորագրված է յոթաթերթ ծաղիկներով վարդյակ: Խոյակների 10 սմ բարձրությամբ վերնամասը քառաթերթ ծաղիկների կրկնվող քայլով և ոլորագարդով փորագրված հորիզոնական գոտի է, որը պարագծում է բոլոր երեք նիստերը (նկ. 10-2):

Քանդակագարդ այս խոյակները և պեղումները գտնված՝ առանձին կանգնած կոթողների պատկանող բեկորները հար և նման են Հայաստանի զանազան հուշարձաններում պահպանված (Երերույք, Ծիծեռնավանք, Կողբ, Աղիտու) վաղըրիստոնեական քանդակներին:

Խարիսխը խոյակների համեմատ ավելի կոպիտ է մշակված: Այն երկմաս կառուցվածք ունի՝ կազմված մոտավորապես քառակուսի (0,54 x 0,56 մ) ու 0,24 մ բարձրությամբ սալից և նույնքան բարձրության տորաձև բարձակից: Այս խարիսխը եկեղեցու ներսում ոչ մի տեղ չի տեղադրվում և, հավանաբար, պատկանել է արտաքին սյունասարահի կամ մեկ այլ կառույցի:

Հայկական ճարտարապետության մեջ քիվերն առաջնակարգ կոնստրուկտիվ նշանակություն ունեն: Դրանք պատի հարթությունից զգալիորեն առաջացող հորիզոնական՝ երկու մասից բաղկացած սալեր են: Տիգրանակերտի եկեղեցում ևս քիվերն ունեն երկմաս կառուցվածք՝ բաղկացած վերնասալից (9, 10, 11 սմ բարձրությամբ) ու դրանից ներքև դասավորված ատամնաշարերից: Բարձրության հիմնական մասը կազմում են ատամնաշարերը (14, 18, 19, 20 սմ), որոնք ճակատային մասում մշակված են բավական խորը քանդակված ատամների շարքի մի քանի տարբերակներով (նկ. 11):



Նկ. 11. Քիվի բեկորներ

Առայժմ վավերացված են քիվերի չորս տարբերակներ: Այս ատամնաշարերն անտիկ ճարտարապետության հեռավոր արձագանքներն են, որոնք նույնպես վկայում են բազիլիկայի հնագույն ծագման մասին:

Տիգրանակերտի բազիլիկան, ավաղ, պահպանված պատուհաններ չունի, որ հնարավոր լիներ ավելի մանրամասն ներկայացնել դրանք: Սակայն պեղումների ընթացքում բացահայտված պսակների բեկորները խոսում են և հուշում են, որ ժամանակին եկեղեցին ունեցել է կամարաձև վերնամասով լուսամուտներ, ինչպիսիք բնորոշ են վաղքրիստոնեական հայկական ճարտարապետությանը:

Միջնադարյան ճարտարապետներն ու քարագործ վարպետները շատ լավ էին տիրապետում իրենց գործին: Հաստատ է, որ ամեն մի քիչ թե շատ նշանակալից կառույց ունեցել է իր նախագիծը և կոնստրուկտիվ լուծումների որոշակի հիմնավորումը: Նրանք իրենց իմացություններն օգտագործել են նաև անմիջապես շինարարության ընթացքում<sup>19</sup>: Նշագծման հետքեր են պահպանվել նաև Տիգրանակերտի եկեղեցում հայտնաբերված ճարտարապետական մանրամասների վրա: Հատկապես պարզորոշ երևում են քիվերի հարթ մակերեսի վրա սուր գործիքով

<sup>19</sup> Ս. Խ. Մնացականյան. Միջնադարյան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի քանի հարցերը և քարագործ վարպետների նշանագրերը. – ՊԲՀ, 1968, № 3, էջ 84–85:

արված զուգահեռ գծերը, որոնց հետևելով քանդակվել են աստամնաշարերը (նկ. 11): Ուշագրավ է նաև, որ եկեղեցուն պատկանող քարերի վրա նշմարելի են վարպետի նշաններ: Ոչ մեծ խաչի տեսքով վարպետի նշանը հայտնաբերվել է եկեղեցու հարավարևմտյան անկյունում՝ շարքի մեջ՝ դրսի կողմից: Այդպիսի նշան ունի նաև եկեղեցու հարավային կողմում միաշար պատի մեջ վերաօգտագործված՝ եկեղեցուն պատկանող մի սալաքար:

ԱՐՏԱՔՈՒՍ ՇԵՇՏՎԱԾ ԱԲՄԻՂՈՎ ՄԻԱՆԱԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ					
Արտաքուստ՝ նիստավոր, ներսից՝ շրջանաձև արսիղով					
եկեղեցին	աղոթասրահի չափերը /մ/	համաչափությունը	նիստերի քանակը	շինանյութը	գտնվելու վայրը
Տիգրանակերտի	6,8 x 21,4	1. 3	5	կրաքար	Արցախ
Վանստանի	4,15 x 10,55	1. 2,5	5	բազալտ	Խորսովի արգելոց
Շողագավանքի	3,8 x 5,18	1. 1,4	5	տուֆ	ՀՀ Մարտունու շրջան, Ձորագյուղ
Ջրվեժ	4,08 x 8,35	1. 2	5	տուֆ	Ջրվեժ
Բայբուրդ	3,95 x 8,25	1. 2	5	բազալտ	Խորսովի արգելոց
Փարպիի Ծիրանավոր	4,15 x 8,75	1. 2	5	բազալտ	Աշտարակ
Արտաքուստ՝ նիստավոր, ներսից՝ պայտածև արսիղով					
Ջարջառիսի	6,62 x 17,63	1. 2,7	5	տուֆ	Արագած
Պենգաշենի	4,9 x 13,5	1. 2,75	5	տուֆ	Արթիկ
Ոսկեվազի	6,7 x 9,4	1. 1,4	5	տուֆ	Աշտարակ
Արտաքուստ՝ շրջանաձև, ներսից՝ պայտածև կամ շրջանաձև արսիղով					
Լուսակերտի	4,9 x 8,2	1. 1,7		բազալտ	Հրազդան
Բատիկյանի	3,6 x 6,2	1. 1,7		տուֆ	Հրազդան
Սուղագիլան 1	5,0 x 14,0	1. 2,8		հում աղյուս	Մինգեչաուր, Աղվանք
Սուղագիլան 1	6,0 x 8,0	1. 1,3		հում աղյուս	Մինգեչաուր, Աղվանք

Նախնական դիտարկումներով բազիլիկյան կանգուն պիտի եղած լինե՞ր մինչև IX դարի վերջերը, որից հետո ավերվել է: Ավերումից հետո տարհանվել են պատերի մշակված քարերը, որոնց բները երևում են շաղախի կանգուն հատվածներում: Հետագայում՝ վերակառուցումներ կատարելիս, եկեղեցուն համաժամանակյա կցված կառույցի պահպանված ավերակներին հարավարևելյան կողմից հավելել են մի սենյակ, որի արևելյան պատը բազիլիկայի մշակված միակողմ խոշոր քարերով է շարված, իսկ մյուս երկու պատերը՝ անմշակ մանր քարերով: Այս կացարանի, ինչպես նաև վերին շերտերում բացված պատերի մնացորդների շինարարա-

կան կերպը հարիր չեն եկեղեցու դասական ոճին, կառուցողական սկզբունքներին և ակնհայտորեն ցուցում են կառուցման այլ ժամանակ (նկ. 4):

Տիգրանակերտի բազիլիկ եկեղեցին իր համամասնությամբ հարում է երկայնական տիպի պաշտամունքային կառույցների դասական համաչափությանը: Աղոթասրահի լայնության և երկարության հարաբերությունը վաղմիջնադարյան միանավ նմանատիպ հուշարձաններում տարբեր է. 1:1,4 (Ոսկեվազ, Շողագավանք), 1:1,5 (Էջմիածին), 1:1,7 (Լուսակերտ, Բատիկյան), 1:2 (Փարպի, Ջրվեժ, Բայբուրդ), 1:2,5 (Պեմզաշեն, Ջարջառիս, Վանստան): Թ. Թորամանյանը այսպիսի ձգված համաչափությունը համարում էր IV–V դդ., «ամենավաղ շրջանի քրիստոնեական ճարտարապետության ոճ կամ պահանջ»<sup>20</sup>: Տիգրանակերտի բազիլիկայում այդ հարաբերությունը 3,0 է, որը բացառիկ երևույթ է: Գորիսի շրջանի Վերիշեն գյուղի Սբ. Հռիփսիմե եկեղեցում նույնպես մոտավորապես այդպիսի ցուցանիշ է արձանագրվում՝ 1:2,8, որը, սակայն, ենթարկվել է հետագա վերակառուցումների: Տիգրանակերտի եկեղեցին, հավանաբար, նախապես ունեցել է փայտից ծածկ: Քարե թաղով ծածկը նույնպես լիովին բացառել չի կարելի, քանի որ պեղումների ընթացքում բացվել են կրաշաղախի զանգվածեղ կտորներ ու միակողմ սրբատաշ քարի բլոկներ, որոնք կարող էին պատկանել ոչ միայն գմբեթարդին, այլև թաղին: Այսպիսի թաղով միանավ բազիլիկայի հնավանդ օրինակ է Կառնուտի բազիլիկան<sup>21</sup>, որը մոտավորապես նույն թռիչքն ունի (6,25 մ), ինչ Տիգրանակերտի միանավ սրահը (6,8 մ):

Տիգրանակերտի եկեղեցու տանիքը կղմինդրապատ է եղել (պահպանված չէ): Կղմինդրի բազմաթիվ բեկորներ գտնվել են կառույցի հյուսիսարևմտյան մուտքի արտաքին կողմում՝ լիցքի 2, 6 մ խորության մեջ (նկ. 8-1): Հայտնաբերվել են նաև քիչ քանակությամբ աղյուսներ՝ պատրաստված ոչ բարձրորակ կարմիր կավից:

Եկեղեցու տարածքային զուգահեռները: Տիգրանակերտի եկեղեցու տարածքային ամենամոտ զուգահեռը Խաչենագետի ներքնահովտում վավերացված մյուս ուշագրավ՝ Գյավուր կալա կոչվող (բառացի՝ անհավատների բերդ) բնակատեղիի հարավարևմտյան հատվածում բացված վաղքրիստոնեական եկեղեցին է: 2013 թ. Տիգրանակերտի արշավախմբի մի ջոկատ<sup>22</sup> իրականացրել է նաև Գյավուր կալայի եկեղեցու պեղումները: Բնակատեղին 1960–1970-ական թվականներին մասնակի

<sup>20</sup> Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1942, էջ 131:

<sup>21</sup> Н. М. Токарска и й. Архитектура Армении IV–XIV вв. Ереван, 1961, с. 72.

<sup>22</sup> Արշավախմբի ղեկավար՝ Հ. Լ. Պետրոսյան, հնագետ՝ Ն. Երանյան, ճարտարապետ՝ Լ. Կիրակոսյան, ճարտարապետի օգնական՝ Լ. Մինասյան: Աշխատանքներն ընթացել են Նոր Հայկաջուր գյուղի բնակիչներից կազմված աշխատանքային խմբի մասնակցությամբ:



ուսումնասիրել են աղբբեջանցի հնագետները<sup>23</sup>: Այդ ժամանակ հնավայրի տարածքում գտնվող եկեղեցին ու վաղքրիստոնեական մյուս կառույցների ավերակները ներկայացվել են որպես Կովկասյան Աղվանքի հուշարձաններ: Ամբողջությամբ բացված եկեղեցին մասամբ նորից ծածկվել էր: 2013 թ. պեղումներից հետո ուրվագծվում է եկեղեցու հատակագիծը. այն ուղղանկյանը ներգծված կիսաշրջանաձև արսիդով միանավ սրահ է, Տիգրանակերտի եկեղեցու համեմատությամբ ունի ավելի համեստ չափեր (18,0 x 7,75 մ) (նկ. 10): Այն նույնպես կղմինդրածածկ է եղել և կառուցվել է կրաքարով, ինչպես որ Տիգրանակերտի միանավ բազիլիկան: Հատակագծային հորինվածքի տարբերությունն այն է, որ Գյավուր կալայի եկեղեցում արսիդը ներգծված է ուղղանկյանը, իսկ Տիգրանակերտում՝ արտաքինից շեշտված: Ուշագրավ է, որ Տիգրանակերտի խնդրո առարկա եկեղեցու հարևանությամբ պեղումների արդյունքում հայտնաբերվել է մեկ այլ՝ այսպիսի հորինվածքով միանավ սրահ: Գյավուր կալայի տարածքում հայտնաբերվել են նաև վաղքրիստոնեական բազմաթիվ խարիսխներ, խոյակներ, որպիսիք հայտնաբերվել են նաև Տիգրանակերտի եկեղեցում (նկ. 12):




Նկ.12. Գյավուր կալայի եկեղեցին

1971 թ. Քուրի ձախ ափին՝ Սուդագիյան բնակատեղիի մոտ (Մինգեչաուր) նույնպես հայտնաբերվել են երկու՝ արտաքուստ շեշտված արսիդով միանավ սրահներ, որոնք կառուցված են հում աղյուսով՝ թրծված աղյուսի սահմանափակ օգտագործմամբ: Արսիդներն այստեղ ինչպես ներսից, այնպես էլ արտաքինից շրջանաձև շառավիղը 2,5 մ) են: Բեմը, ինչպես և Տիգրանակերտի եկեղեցում, խո-

<sup>23</sup> Ամփոփ արդյունքերը տե՛ս Ռ. Մ. Վահիդով. Հնագիտական պեղումները Գյավուր կալայում.՝ Աղբբեջանի նյութական մշակույթը, հ. 4, Բաքու, 1965, էջ 167-181 (աղբբեջաներեն):

րանի շրջագծից առաջ է գալիս դեպի աղոթասարահ և նրա մակարդակից բարձրացված է 0,8 մ<sup>24</sup> (նկ. 13-1):

Աբսիդի տեղում՝ պեղումների ընթացքում, վերին շերտերում հայտնաբերվել են սրբատաշ, ամբողջական կամ բեկորային սպիտակ կրաքարե սալեր և ճարտարապետական մանրամասներ: Ուշագրավ է դրանցից մեկը. այն 35 սմ բարձրությամբ քառակող մի կոթող է, որն ավարտվում է 10 սմ բարձրությամբ և կոթողի պարագծով պատվող քիվով: Քիվն ունի ալբաներեն արձանագրություն: Հայտնի են նաև հայերեն արձանագրություններ: Պատվանդանի դիմային




Նկ. 13. Սուղագիլյան բնակատեղիում հայտնաբերված 1. միանավ սրահների հատակագիծը, VI–VIII դդ., 2. քառակող կոթողը

կողմում պատկերված են դեմ դիմաց կանգնած երկու սիրամարգեր, որոնք կտուցներով հպված են կենտրոնում քանդակված կենաց ծառին: Սիրամարգերի պարանոցները պարուրված են պատվո ծապավեններով, որոնք սովորաբար Սասանյանների իշխանության խորհրդանիշ են: Այս սրբատաշ քարի կենտրոնում՝ ներքևի և վերևի հարթությունների միջով շրջանաձև հիմքով միջանցիկ անցք է բացված: Ենթադրվում է, որ այս ճարտարապետական մանրամասնը պսակել է աբսիդի կենտրոնում դրված պատվանդանի վերնամասը, որտեղ էլ միջանցիկ անցքի մեջ ազուցել են փայտից խաչ (նկ. 13-2)<sup>25</sup>: Չանգվածեղ սյան մեկ հետաքրքիր վերնամաս էլ բացվել է Տիգրանակերտի եկեղեցու պեղումներից: Այն բաղկացած է 9 սմ հաստությամբ վերին քառանկյուն քիվից և որմնասյան կլոր իրանից, որի ստորին մա-

<sup>24</sup> Р. В а и д о в. Раннесредневековое городище Судагылан (Мингечаур.– Краткие сообщения Института истории материальной культуры, вып. 54, 1954, с. 132–133, рис. 60.

<sup>25</sup> Նույն տեղում:

սը եզերում է պարանտեսք գլանը: Հատվածի կենտրոնում կլոր միջանցիկ անցք է՝ 16 սմ շառավղով: Քիվի երկու նիստերին առկա են երկրաչափական զարդանախշեր, իսկ մյուս նիստերը վնասված են: Մյան իրանի վրա չորս կողմից պահպանվել են եղջյուրանման ելուստներ, որոնք մասամբ վնասված են: Կարելի է ենթադրել, որ դրանք ունեցել են տեխնիկական նշանակություն: Մյան միջանցիկ անցքը լցված էր մոխրով: Բացառված չէ, որ այս կոթողը վերաօգտագործվել է որպես կրակարան: Նշենք նաև, որ այն եկեղեցուն չի պատկանել, քանի որ եկեղեցու կառույցում ընդհանրապես այլուներ չեն օգտագործվել: Բացառված չէ, որ այն վաղբրիստոնեական կոթողի մաս է (նկ. 14):



Նկ. 14. Տիգրանակերտի եկեղեցու պեղումներից հայտնաբերված կոթողը, լուսանկարը՝ Զ. Պետրոսյանի

Մինգեչաուրի միանավ սրահներն ունեցել են փայտից ծածկեր: Տանիքները, ինչպես Տիգրանակերտի միանավ սրահում, կղմինդրապատ են<sup>26</sup>: Ներկայացված կառույցները դիտարկելիս նկատվում է, որ սրբատաշ քարերով հուշարձանները հանդիպում են միայն Քուրի աջափնյակում և հայ վարպետներն են կառուցել: Ավելի կոպիտ տեխնիկայով, ճեղքված և գլաքարերով իրականացված կամ խառը տեխնիկայով՝ թրծված, հում աղյուսի և սրբատաշ քարի համադրությամբ կառույցները տարածված են ինչպես Քուրի ձախ ամրում, այնպես էլ Հայաստանում և Վրաստանում:

Կառուցվածքի ուղղանկյուն պատերի մեջ չպարփակված, դեպի դուրս եկող արսիդով (ինչպիսին Տիգրանակերտի բազիլիկ եկեղեցին է), անկախ վերջինիս ձևից (կիսաշրջանաձև կամ բազմանիստ), հորինվածքը բնորոշ է հայկական վաղ միջ-

<sup>26</sup> P. M. В а и д о в, В. П. Ф о м е н к о. Средневековый храм в Мингечауре.– Материальная культура Азербайджана, т. II, Баку. 1951, с. 80.

նադարի՝ հատկապես IV–VI դդ. հուշարձաններին: Այդ դարերի սիրիական միանավ եկեղեցիների մեծ մասի արսիդները նույնպես դուրս են գալիս ընդհանուր ծավալից: Սակայն, ի տարբերություն հայկական հուշարձանների և, ի մասնավորի, Տիգրանակերտի եկեղեցու, որտեղ արսիդը բազմանիստ է, սիրիականներում դրանք հիմնականում շրջանաձև են<sup>27</sup> (Կալբ Լուզե, Տուրմանին): Կապադովկիայում դրանք նման են հայկական տարբերակներին. դրսից շեշտված բազմանիստ (հիմնականում հնգանիստ) արսիդներ (Եդիկապուլու, Մկուպա, Թոմարգա և այլն) ունեն<sup>28</sup>: Վրաստանում նույնպես հանդիպում են նմանատիպ եկեղեցիներ: Մրանք կիրառվում են ոչ միայն պարզ թաղածածկ դահլիճի հորինվածքներում (Ակաուրտա), այլ նաև արտաքին սրահ ունեցող եկեղեցիներում (Վանատի, Բոլնիս Քափանակչի): Մինչդեռ Հայաստանում արտաքին սրահ ունեցող բոլոր եկեղեցիներում արսիդն առնված է պատերի ուղղանկյուն պարագծի մեջ: Արտաքուստ շեշտված արսիդով միանավ դահլիճներ հայտնի են նաև Ադվանքում (Կախ-բաշ, Մինգեչաուր)<sup>29</sup>:

Հայաստանի վաղ միջնադարի միանավ եկեղեցիները, նմանատիպ կառույցների հետ համեմատած, ունեն ճարտարապետական մի էական առանձնահատկություն՝ թաղակիր կամարների գոյությունը թաղի կառուցվածքում: Վերջիններս կոշտություն ու կայունություն են հաղորդում դահլիճի երկայնական պատերին և ծածկի թաղին, որն էլ ապահովում է կառուցվածքի սեյսմակայունությունը: Այսպիսով, կարելի է խոսել հայկական ճարտարապետության և Փոքր Ասիայի ու Անդրկովկասի, ինչպես նաև Միջինասիայի հետ ունեցած վաղ քրիստոնեական մշակութային առնչությունների մասին<sup>30</sup>: Դրանով հանդերձ, հայկական ճարտարապետության բազմաթիվ առանձնահատկությունները հնարավոր են դարձնում հաստատել տեղական առանձնահատուկ դպրոցի գոյությունը հենց իր զարգացման վաղ փուլում:

Վաղ միջնադարում հայ ճարտարապետական հուշարձաններից արտաքուստ բազմանիստ արսիդ ունեն ոչ միայն միանավ եկեղեցիները, այլև եռանավ և գմբեթավոր բազիլիկներն ու հատկապես կենտրոնազմբեթ կառուցվածքները: Այսինքն՝ արտաքուստ շեշտված արսիդով շրջանաձև կամ բազմանիստ արսիդը բավական տարածված ձև է հայկական IV–VI դդ. շինարարական արվեստում և բնորոշ է հայ ճարտարապետությանը նրա սկզբնավորումից ի վեր:

Տիգրանակերտի բազիլիկայի ամրակայման և վերակազմության առաջարկ: Գիտական և մշակութային խոշոր նշանակություն ունենալով հանդերձ՝

<sup>27</sup> G. Tchalenko. Village antiques de la Syrie du Nord, t. 1, Paris, 1953, p. 111.

<sup>28</sup> M. Restle. Studien zur frühbyzantinischen Architektur Kappadokiens, 1, 1970, p. 168–169.

<sup>29</sup> А. Якобсон. Архитектурные связи Кавказской Албании и Армении. – ИФЖ, 1976, <sup>1</sup> 1, с. 70–71.

<sup>30</sup> А. Казарян. Архитектура Армении V–VI вв. и раннехристианское зодчество Кападокии, Киликии и Исаврии. – Հայաստանը և քրիստոնյա Արևելքը, Երևան, 2000, էջ 247:

Արցախի Տիգրանակերտ քաղաքի հայտնաբերումն այսօր արդեն առաջացնում է անհանգստություն՝ բացված հուշարձանների պահպանության, օգտագործման ու վերախմաստավորման խնդիրների առումով: Դրանց լուծումն անհրաժեշտ է և հրատապ: Ի մասնավորի, դա վերաբերում է նաև վաղքրիստոնեական եկեղեցուն:

Հուշարձանի շուրջը դարերի ընթացքում գոյացած հողաշերտի հեռացումը և նախնական նիշերի վերականգնումը պատմական հողատարածքների ճարտարապետահատակագծային կազմակերպման բարդ հարցերից մեկն է: Այսօր եկեղեցին հայտնվել է 800 քառ. մ մակերես և 4 մ խորություն ունեցող փոստրակի մեջ: Ամբողջ տարածքը իջեցվել է մինչև եկեղեցու գետնախարիսխների մակարդակը: Կառույցը, փաստորեն, գտնվում է արհեստական ջրահավաք ավազանի մեջ, որտեղ նկատվում է ոչ միայն մթնոլորտային, այլև գրունտային ջրերի կուտակում: Տարածաշրջանի բավական բարձր խոնավության և փոստրակում ջրերի ներթափանցման պայմաններում եկեղեցու որմնախարիսխների, պատերի ու կրաշաղախե միջուկի վրա նկատվում են աղային կուտակումներ, որոնք առաջացել են ներքևից բարձրացող խոնավության հետևանքով և սպառնում են քարերի ու շաղախների քայքայմանը (նկ. 15-1):



1

2

Նկ. 15. 1. եկեղեցու արևիդի պատի շաղախը՝ աղային միացությունների պատումով, 2. եկեղեցու ներքնատեսքը՝ պահպանված պատերի հատվածներն ու սալահատակը, լուսանկարը՝ Գ. Պետրոսյանի


Մթնոլորտային ջրերը ներթափանցելով խոշոր բլոկների արանքը և լվանալով կրաշաղախը՝ աղձատել են պատը՝ քարերի հեռացման պատճառ դառնալով: Իրենց ազդեցությունն ունեն նաև խոտաբույսերը, որոնց արմատները մխրձվում են քարերի ճեղքերի մեջ՝ վնասելով պատերը:

Պահպանվել են եռաստիճան որմնախարիսխների մոտ 2/3-ից ավելին, դրանց որոշ մասը ունեն տեղաշարժեր: Որմնախարիսխներից մի մասի ամրացնող կրաշաղախը քայքայված է: Եկեղեցու պահպանված պատերը հիմնականում մեկ, որոշ տեղերում երկու շարքի բարձրությամբ են: Դրանց զգալի մասի թիկունքի կրաշա-

դախը քայքայված է: Առավել բարձր՝ մոտ 3 մ պահպանվել է պատերի միայն կրաշաղախե միջուկը, որը զգալիորեն քայքայվել և հողմնահարվել է: Կրաբետոնե միջուկի գրեթե բոլոր մասերում երևում են պատի քարերի բները (նկ. 15-2):

Եկեղեցու սալածածկը հիմնականում պահպանվել է, բացակայում է սրահի արևմտյան հատվածում և խորանի զգալի մասում: Սալաքարերի մոտ 70 % -ը ճաքճքած և կոտրատված են: Դրանք բոլորն էլ իրենց տեղերում են, սակայն հատակը ձևափոխված է (նկ. 4-1, 15-2):

Պեղումների ընթացքում հայտնաբերվել են մոտ 140 հուշարձանապատկան բեկորներ՝ անկյունաքարեր, պատերի հարթ և կոր քարեր, շքամուտքի որմնաայունների և խոյակների, քիվերի ու այլ հատվածների բեկորներ: Չնայած պեղման աշխատանքները դեռ շարունակվում են, խնդիր է առաջացել ամրակայել ու պահպանել եկեղեցին մթնոլորտային գործոնների տարաբնույթ քայքայիչ ազդեցություններից:



Նկ. 16. 1. ջրահեռացման սխեմա, 2. ջրահեռացման կազմակերպում


Եկեղեցու ամրակայումը և նրա որոշ հատվածներում վերականգնման աշխատանքներն այսօր գլխավորապես նպատակ ունեն պահպանելու հուշարձանը և ներկայացնել հանրությանը:

Տիգրանակերտի եկեղեցու համալիր հետազոտությունները հնարավորություն են տալիս ներկայացնել հուշարձանի վերականգնման հայեցակարգը, այն է՝ ելնելով հուշարձանների հիմնական մասի պահպանվածության աստիճանից, կատարել ամրակայման աշխատանքներ, քանզի նրա կառուցվածքային գրեթե բոլոր տարրերը ամրացումների կարիք ունեն, իրականացնել նաև մասնակի վերականգնումներ՝ հնարավորինս նվազագույն միջամտությամբ, որոնք միտված են հիմնականում եկեղեցու գեղագիտական տեսքի վերականգնմանը: Վերականգնվում են միայն հուշարձանի հավաստի տեղեկատվություն պարունակող հատվածները: Խիստ անհրաժեշտ ու անհետաձգելի միջոցառում է Տիգրանակերտի վաղբրիստոնեական բազիլիկայի կառուցվածքում խոնավազրկումը: Հուշարձանի տարածքից ստորգետնյա ջրերը հեռացնելու լավագույն միջոցը դրենաժային համակարգի ստեղծումն է (նկ. 16-1): Անձրևի և ձնհալի ջրերը հուշարձանի տարածքից հեռացնելը հարկ է կատարել նրա շրջապատում

թեքություններ ստեղծելով, որը կնպաստի առվակներով ջրի հեռացմանը: Այժմ կազմակերպված է տարածքից ժամանակավոր ջրահեռացում (նկ. 16-2):

Եկեղեցին ամրակայելիս ի սկզբանե ամրացվում են հուշարձանի որմնախարիսխներն ու լրացվում դրանց բացակայող քարերը: Ամրացվում են պատային հատվածները՝ օգտագործելով պահպանված բեկորները՝ դրանք տեղադրելով համապատասխան տեղերում, իսկ անհրաժեշտ լրացումները կատարվում են ներդաշնակորեն: Ամրացվում է հուշարձանի սալահատակը:


Տիգրանակերտի միանավ եկեղեցու պահպանված շինարարական ավերակները, նրա տեսական և համեմատական վերլուծությունը, զուգահեռների ուսումնասիրումն ու համադրումը հնարավոր են դարձրել ներկայացնել բազիլիկայի վերակազմությունը և ճարտարապետական կերպարը (նկ. 17):



Նկ.17. Տիգրանակերտի եկեղեցու վերակազմությունը

Արցախի Տիգրանակերտի Կենտրոնական թաղամասում պեղված ու ճարտարապետորեն հետազոտված միանավ բազիլիկ տաճարը Անդրկովկասի համանման ամենախոշոր և վեհաշուք կառույցներից մեկն է՝ տպավորիչ չափերով, զուսպ արտահայտչանականությամբ և հստակ ուրվագծով: Այն կառուցված է սալապատ հրապարակում՝ բարձր որմնախարսխի վրա և ունի ձգված համաչափություններ: Շատ տպավորիչ է նաև Տիգրանակերտի եկեղեցու վաղբրիստոնեական միջավայրն ու ճարտարապետական համալիրը, որն այսօր ներկայանում է երկու եկեղեցիներով, իաչակիր կոթողի մնացորդներով, վաղբրիստոնեական թաղածածկ դամբարանով, տապանաքարեր և քարատապաններ կրող տապանաբակով: Հա-

մալիքը վկայում է երբեմնի հարուստ վաղքրիստոնեական կառուցապատման մասին: Վերականգնելի է նաև հրապարակի կառուցապատման ընթացքը. սրբերի մասունքների անփոփման համար դամբարանի կառուցում (1), որի վրա կառուցվել է Տիգրանակերտի՝ ավելի փոքր չափերի միանավ սրահը (2), սրանից հարավարևելք սրբազան հարթակի վրա հուշակոթողի կառուցում (4), ապա քաղաքային՝ քննարկվող եկեղեցու կառուցում (3)՝ գոյություն ունեցողի հարավային կողմում և սարկոֆագերի կառուցում (5): Հորինվածքի դոմինանտը համալիրում, անշուշտ, Տիգրանակերտի բազիլիկ եկեղեցին է:



Նկ.18. Տիգրանակերտի վաղքրիստոնեական ճարտարապետական համալիրի ժամանակակից տեսքը. 1. վաղքրիստոնեական դամբարան, 2. փոքր եկեղեցի, 3. մեծ եկեղեցի, 4. հուշակոթող-հարթակի վրա, 5. սալարկղ և սարկոֆագեր (քարատապան)

*Տիգրանակերտի վաղքրիստոնեական ճարտարապետական համալիրը և մեծ բազիլիկ եկեղեցու առկայությունը կարևոր վկայություն է այն իրողության, որ վաղ միջնադարում Արցախի Տիգրանակերտը պահպանում էր հայկական նշանավոր բնակավայրի իր կարգավիճակը՝ մեծաքանակ քրիստոնյա համայնքով ու վեհաշուք տաճարով:*



## АРХИТЕКТУРА ТИГРАНАКЕРТСКОЙ ЦЕРКВИ В АРЦАХЕ

ЛЮБА КИРАКОСЯН

## Резюме

Арцахский Тигранакерт–поселение, основанное Тиграном Великим (95–55 гг. до н. э.) и названное в его честь. Его место определено и уже 10 лет на нем производятся археологические раскопки. Город находится в Аскеранском районе Нагорно-Карабахской Республики, в нижнем течении реки Хаченагет, к югу от нее, на одной из сравнительно низких возвышенностей склона Ванкасарской горы и на впадине близ этого склона, по соседству с Царскими родниками (Шахбулах). В центральном квартале Тигранакерта была построена раннехристианская церковь. До раскопок на месте ныне открытой базилики виднелись только несколько крупных глыб известнякового раствора и углубление, направленное по оси восток-запад. Благодаря раскопкам на глубине около 4 м открылись руины церкви. Полностью сохранился план постройки, очевидна объемно-пространственная композиция (местами высота стен сохранилась до 3 м). Это подчеркнутый с наружной стороны пятиабсидный, однефный зал (27,3 x 9,3 м). С внутренней стороны абсида полукруглая. Длина церкви намного превосходит ее ширину, имеет трехступенчатый стилобат, пять входов. Церковь была покрыта двускатной черепичной крышей (она не сохранилась, но при раскопках найдены многочисленные куски черепиц). Базилика построена из хорошо обтесанного известняка на известняковом растворе, имела зубчатый карниз. Композиция в виде крестов и гроздьев винограда украшала грани капителей. Церковь Тигранакерта является одной из наиболее величественных и крупных построек Закавказья. Она имеет аналогии в регионе (церковь Гяур калы) и характерные особенности однефных церквей армянской архитектуры IV–VI вв. Комплексные исследования Тигранакертской церкви дают возможность представить концепцию восстановительных работ, т. е., учитывая состояние сохранности памятника, произвести усиление и консервацию. Сохранившиеся руины, теоретический и сравнительный анализы, исследование и сопоставление параллелей сделали возможным представить также реконструкцию базилики.

## THE ARCHITECTURE OF TIGRANAKERT CHURCH IN ARTSAKH

LYUBA KIRAKOSYAN

## Summary

The settlement of Tigranakert in Artsakh was founded and named after Tigran the Great (95–55 B. C.). The place of the settlement was defined and archaeological excavations have already been held for 10 years. The town is located in the Askeran region of Nagorno-Karabakh Republic on the lower current of the Khachenaget river to the south of the river on the one of the comparatively low heights of the slopes of Vankasar mountain and in the depression near by the slope in the vicinity of the Royal Springs (Shahbulah). In the central district of the town an early Christian Church was built. Before the excavations in the place of the basilic church only large blocks of lime mortar and a hollow with its axis oriented from east to west were found. Owing to the excavations at the depth of about 4,0 meters the ruins of the church were unearthed. The plan of the building was completely preserved, the spatial composition (in places the height of the walls is 3 meters) is obvious. From outside it is a five-apsed, one – nave hall (27,3 x 9,3 m). Inside the apse is semicircular. The length of the church exceeds its width, has a three-stair-step strobate, five entrances and was covered with a gable tiled roof (the roof wasn't preserved but there were a great number of tiles found during the excavation). The church was built of a finely polished limestone connected by lime mortar, had a coggled cornice. A composition in the form of crosses and clusters of grapes decorated the capital of the facade. The basilic church of Tigranakert is one of the most magnificent and largest buildings in Transcaucasia. It has analogues in the region (Gyavur kala) and characteristic features of one-nave churches of the 4th – 6th centuries. Complex investigations of Tigranakert church enable us to introduce the concept of reconstruction works, i. e. considering the conditions of the preservation of the monument to reinforce and conserve. The remaining ruins, the theoretical and comparative analysis, investigation and comparison of parallels enabled us to give the reconstruction of the basilica, as well.